նել արքայիս Հայոց Արշակայ, զի զայսպիսի գործ գործեաց, կամ զայսպիսի քաջութիւն արարեալ, կամ զայսպիսի թշնամիս եհար եւ զայսպիսի պատերազմ մղեաց, կամ այսպիսի ճակատու յաղթեաց եւ զայսպիսի անուն ստացաւ մեզ: *27* Զի եթէ մեք լեալ էաք, ամենայն Արեաց զաւրք հանդերձ այսպիսի աջողութեամբ գայր ի ձեռն, քաջ թէ զոյգ հասարակ այսպիսի գործ ի միասին կարէաք գործել. արդ Հայոց արքայ իւրով զաւրութեամբն ընդ մեր նահատակեալ, զայսչափ քաջութիւնս արար, զոր ոչ ոք կարէ առնել ամենեւին: *28* Արդ զորպիսի՞ հատուցումն բարեաց կարասցուք մեք առնել նմա: *29* Եւ այսպիսի անգեալ էր ի խորհուրդս, թէ զի՞նչ այն ինչ իցէ զոր տայցեմ ես նմա: *30* Ապա տային պատասխանի նախարարքն իւր Շապհոյ արքային Պարսից, եւ ասեն ցնա՝ թէ զինչ եւ կամիս, իւ կամիս՝ կարող ես հաճել զնա. ոսկի քո շատ եւ արծաթ, կերպաս եւ մարգարիտ. զինչ եւ միանգամ դու կամիս շնորհել նմա, տուր նմա: *31* Ապա տայր պատասխանի Շապուհ թագաւորն Պարսից իւրոց իշխանացն, եւ ասէ. Արդ ոչ եթէ սէր ինչ է, զոր դուքդ ասացէք. այլ եկայք, անքակ սէր արասցուք մեք ընդ Արշակայ արքային Հայոց, զի մինչեւ յաւիտեան անբաժին լիցի նա ի մէնջ: *32* Տացեմ զդուստր իմ կնութիւն Արշակայ արքային Հայոց, եւ տաց նմա տուն մեծ. զի յորժամ գնասցէ ի Հայոց գալ առ մեզ, այնպէս տացուք նմա տուն, զի ի Հայոց մինչեւ ի Տիզբոն մինչեւ առ մեզ համակ յիւրում տան ագցի, մինչեւ առ մեզ եկեսցէ: *33* Թագաւորին զայս արասցուք. իսկ զաւրավարին Վասակայ կամ այլոց մեծամեծացն եւ զաւրավարացն տացուք ոսկի եւ արծաթ, կերպաս եւ մարգարիտ: *34* Եւ հաճեցան մեծամեծքն եւ խորհրդակիցք թագաւորին Պարսից ընդ այս խորհուրդ, եւ հաստատէին զասացեալսն՝ թէ արժան է զայդ առնել:

35 Իսկ թագաւորն Պարսից Շապուհ մեծաւ ստիպով ստիպէր զթագաւորն Հայոց զԱրշակ, զի առցէ գնասցէ զնա ընդ ինքեան յԱսորեստան, զի անդ մեծափառ պատուով եւ փեսայութեամբ մեծարեսցէ զնա: *36* Իսկ Արշակ եւ ամենայն զաւրք իւր տաղտապէին[1] երթալ զհեռի ճանապարհն. զի ամենայն ոք յանձնիւր տուն յիւրաքանչիւր տեղի զաւրէն բարուց հայաստան մարդկան անձկացեալ էին: *37* Եւ եղեւ իբրեւ ի վերայ հասանէր իրացն Անդովկ նահապետն Սիւնեաց գաւառին, եթէ Շապուհ թագաւորն Պարսից կամի տալ զդուստր իւր կնութեան Արշակայ թագաւորին Հայոց, մեծապէս երկեաւ, եւ բախեցաւ նորա կասկած մտացն իւրոց: *38* Զի եդ ի մտի իւրում՝ թէ յորժամ առցէ Արշակ կին իւր զդուստր թագաւորին Պարսից, յայտ է այնուհետեւ՝ թէ անարգի դուստր նորա: *39* Վասն զի Փառանձեմ դուստր Անդովկայ, որ էր կին լեալ Գնելոյ, ի ժամանակի անդ էր կին Արշակայ թագաւորին Հայոց. կասկածէր նա՝ թէ գուցէ յորժամ այլ առցէ, զնորայն անարգեսցէ:

1 *Յերկուս օրինակս*՝ տաղտկապէին